ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հեռ./ Ֆաքս՝ 53-09-86 Երևան-19, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20

«19» 07 2017 թ. № 19/756

<<Պահապան>> ՍՊԸ-ի
Տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանին

Համաձայն ՀՀ Պետական պահպանության ծառայության և <<Պահապան>> ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ. կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 պայմանագրի մինչև 30.06.2017թ. Ձեր կողմից պետք է մատակարարվեր՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով, երկարաթև սպիտակ վերնաշապիկ, երկարաթև դեղնականաչավուն վերնաշապիկ, կարճաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև դեղնականաչավուն վերնաշապիկ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի, ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար, ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար, որոնք մատակարարվել են բազմաթիվ թերություններով: (Տես N 1, N 2, N 3 արձանագրությունները, որոնք կցված են):

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները, կողմերի միջև կազմված N 1 արձանագրությունը (04.07.2017թ.), N 2 արձանագրությունը (13.07.2017թ.) (մատակարարը հրաժարվել է ստորագրելուց) և N 3 արձանագրությունը (17.07.2017թ.) (մատակարարը հրաժարվել է ստորագրելուց) ՀՀ պետական պահպանության ծառայությունը միակողմանի լուծում է 25.04.2017թ. կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 գնման պայմանագիրը:

Ռ. Հարությունյան